

## Սիրելի հայրենակիցներ,

Այս թիւով, մանրամասն անդրադարձ չեն ուզեր կատարել երկրէն ներս զարգացող տնտեսական անկումին ստեղծած բարդ իրավիճակին մասին, յաւելեալ մտահոգութիւն չպատճառելու միտումով, որովհետեւ իւրաքանչիւրդ արդէն իսկ կ'ապրիք ու կը փորձէք դիմագրաւել ձեր շուրջը տիրող կացութիւնները: Անգործութեան թիւը յաւելում արձանագրած է վերջին երեք ամսուան ընթացքին, իսկ Կիպրոսի հիմնական դրամատուները՝ կը դիմագրաւեն մեծ դժուարութիւններ: Այս վերջին զարգացումներուն լոյսին տակ, Կիպրոսի Կառավարութիւնը ստիպուած եղաւ դիմելու Եւրոպական Զօրակցութեան Աջակցութեան Մեքանիզմին, վերականգնելու դրամատնային համակարգը եւ բարելաւելու երկրին զարգացման քաղաքականութիւնը:

Գալով մեր գրասենեակի եւ Կիպրահայ գաղութի ներքին ու ազգային կեանքին, հակառակ երկրին տնտեսական վիճակին, ծրագրուած ձեռնարկներու եւ միջոցառումներու հոլովոյթը շարունակուեցաւ՝ ապագայի աւելի լաւ օրերու հեռանկարով: Այս եռամսեան եղաւ բաւական բեղուն ու արդինաւէտ, մեզմէ պահանջելով երկար ժամերու տքնաջան աշխատանք: «Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ անդրադարձած ենք անոնց մասին:

Ինչ կը վերաբերի Զայկական Մանկամսուրի ծրագիրին, աշխատանքները կը շարունակուին եւ կը յուսանք, թէ մինչեւ վերամուտ կը հասնինք շօշափելի արդիւնքի: Առ այժմ յաւելեալ մանրամասնութիւններ չենք կրնար փոխանցել, մինչեւ շինարարական աշխատանքներու աւարտը եւ վարչական

գործերու յստակացումը:

Յոս տեղին է յիշել, թե Կիպրահայ համայնքը, որպէս Կիպրոսի ժողովուրդին անքակտելի մասնիկը, հպարտութեամբ կ'ողջունէ Եւրոմիութեան Կիպրական Նախագահութեան ստանձնումը 1 Յուլիս 2012-էն սկսեալ եւ այս առիթով կազմակերպած է Կիպրահայ Գեղանկարիչներու եւ Լուսանկարիչներու Տուցահանդէս մը, որ տեղի պիտի ունենայ 16-31 Յուլիս 2012, «Քասթելիոտիսսա» սրահին մէջ: Երկար հանդիպումներու եւ հետապնդումներու շնորհիւ, կարելի եղաւ ապահովել Կիպրահայ համայնքի մասնակցութիւնը, պատշաճ ձեւով նշելու Եւրոմիութեան Կիպրական Նախագահութեան ստանձնումը: Ուրախ եմ յայտնելու, թէ Հանրապետութեան Նախագահ Ն.Վ. Տիար Տիմիթրիս Խրիստոֆիաս, փափաքիս ընդառաջելով, սիրայօժար ընդունեց Երկուշաբթի, 16 Յուլիս 2012-ին, ժամը 19.30-ին, բացումը կատարել այս բարձրորակ ցուցահանդէսին: Այս գծով ներկիակ պիտի գրտնէք թերթիկ մը եւ կը սպասենք, որ ձեր ներկայութեամբ քաջալերէք այս գեղեցիկ նախաձեռնութիւնը:

Խօսքիս աւարտին, ձեզի կը մաղթեմ հանդարտ ու կազդուրիչ ամառնային արձակուրդ:

**Վարդգէս Մահտեսեան**  
**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Երկրէն ներս տիրող տնտեսական դժուար պայմաններուն հետեւանքով, Կիպրոս բնակութիւն հաստատած մեր հայրենակիցներու հարցերը օր ըստ օրէ կը բարդանան: Հակառակ այս իրողութեան, ուրախ ենք յայտնելու, թէ պատկան մարմիններու մօտ մեր գրասենեակին անմիջական միջամտութեան շնորհիւ ստացուած արդիւնքները առ այժմ գոհացուցիչ են:

Այս բաժինով, կը փափաքինք կիպրահայ համայնքի անդամներուն ուշադրութեան յանձնել, թէ Օտարահպատակներու եւ Ներգաղթի բաժանմունքին (Aliens and Immigration Unit) կողմէ վերջերս լոյս տեսած յայտարարութեամբ, Եւրոմիութեան Խորհրդարանի թիւ 444/2009 օրէնքին եւ Եւրոմիութեան Յանձնաժողովին համաձայն, 26.06.2012-էն սկսեալ, Կիպրահպատակ երեխաները ճամբորդութեան պարագային պարտին ունենալ անհատական անձնագիրներ (Passport): Հետեւաբար, ծնողներուն անձնագիրներուն մէջ արձանագրուած փոքրիկներուն համար անմիջապէս պէտք է ապահովուին անհատական անձնագիրներ:

### Ապրիլեան Եղեռնի 97-րդ ամեակի ոգեկոչման ձեռնարկներ

Կազմակերպութեամբ Հայկական Ցեղասպանութեան Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբին, Եղեռնի 97-րդ ամեակի ոգեկոչման ձեռնարկներու մեկնակէտը սկսաւ Չորեքշաբթի, 18 Ապրիլ 2012-ին, արիւնի տուչութեամբ:

Երկուշաբթի, 23 Ապրիլ 2012-ին, կ.ե. ժամը 6:00-ին Նիկոսիոյ քաղաքի կեդրոնական փողոցներէն մէկուն մէջ, սկիզբ առաւ երիտասարդութեան քայլարշաւը, ուղղուելով դէպի Արմենիաս պողոտայ, ուր համայնքի մնացեալ անդամները անոնց միանալով, յառաջացան դէպի Ս. Աստուածածին Եկե-



ղեցույ շրջափակը: Եղեռնի Նահատակներու Յուշահամալիրին առջեւ, երեկոյեան ժամը 7.30-ին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, գլխաւորութեամբ թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Վարուժան Արքեպիսկոպոսի: Հսկումի միջոցառումը կը վայելէր Կիպրոսի Համրապետութեան Խորհրդարանի Նախագահ Եաննակիս Օմիրուի հովանաւորութիւնը:

Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Վարուժան Արք. իր պատգամին մէջ ըսաւ, թէ իւրաքանչիւր օր եւ իւրաքանչիւր ժամ մեզի համար Ապրիլ 24 է եւ կոչ աշխատանքի, պատրաստակամութեան եւ զոհողութեան: Այս է մեր նահատակներէն մեզի փոխանցուած կտակն ու հրահանգը:

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան խօսք առնելով, իր պատգամին մէջ շեշտեց, թէ Հայկական Յեղասպանութեան յանցագործը մնացած է անպատիժ: Մեր պահանջքը արդար հատուցում է եւ ո՛չ թէ վրէժխնդրութիւն: Կը պայքարինք, որպէսզի արդարութիւնը եւ հաւասարութիւնը գերակշիռ ըլլան բոլոր ժողովուրդներուն մէջ: Այս է պատճառներէն մէկը, որ մեզ կը մղէ

անվերապահորեն թիկունք կանգնելու Կիպրական հարցի արդար պայքարին՝ ընդդեմ ցեղասպան թուրքիոյ: Հայ ժողովուրդը ընդմիշտ երախտապարտ պիտի մնայ Կիպրոսի Կառավարութեան՝ Հայկական դատին հանդէպ իր ցուցաբերած յարատեւ աջակցութեան համար: Ան շարունակեց ըսելով, թէ կը պահանջենք մեծ ուժերէն, որոնք միջազգային իրաւունքի պաշտպանները կը դասուին, ճնշում բանեցնել թուրքիոյ վրայ, ընդունելու պատմական իրականութիւնը: Թուրքիա պէտք է քաջութիւնը ունենայ ներողութիւն խնդրելու, որը սակայն պիտի չջնջէ իր անցեալը, այլ նախապայման պիտի հանդիսանայ աւելի լաւ ապագայ մը կերտելու:

Վերջաւորութեան, Պետական Ներկայացուցիչը եզրափակելով իր խօսքը ըսաւ, որ ականայ ցեղասպանութիւնը մեր պատմութեան եւ մեր ընդհանուրին յիշողութեան մէջ է եւ պիտի շարունակէ ըլլալ մեր ամէնօրեայ կեանքին մէկ մասը, մինչեւ մեր ժողովուրդի արդար հատուցումը: Մինչեւ այդ Ցեղասպանութիւնը պիտի մնայ իրականութիւն մը, որ պիտի տանջէ մեզ, բայց միեւնոյն ժամանակ միաւորէ:

Օրուայ ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ Կիպրոսի Խորհրդրդարանի Նախագահ Պրն. Եաննակիս Օմիրու, որ յայտնեց,



թէ սոսկումով եւ միեւնոյն ժամանակ յարգանքով ու խոր զգացումներով ներկայ կը գտնուի այսօր Հայկական Ցեղասպանութեան 97-րդ ամեակի ոգեկոչման հանդիսութեան: Ան ըսաւ, թէ ժամանակը չկրցաւ սպաննել յիշողութիւնը, դաժան ու վերջնական արժեզրկումը մարդկային քաղաքակրթութեան: Յուսայատ մայրերու լացը եւ գլխահատ մանուկներու նկարները դէմ դրին այն բոլոր ուժերուն, որոնք փորձեցին ջնջել մարդկային յիշողութիւնը եւ փոխել պատմութիւնն ու իրականութիւնը: Խօսքը ուղղելով ժողովուրդին, ան շարունակեց ըսելով, որ դուք կենդանի եւ անխախտելի շարունակութիւնն էք Հայ ժողովուրդին Կիպրոսի մէջ, որ մեզի հետ բաժնեցիք մեր մտահոգութիւններն ու պատկերացումները, իսկ մենք ձեզի հետ կիսեցինք ձեր տառապանքն ու գողգոթան: Պրն. Օմիրու շնորհաւորեց Հայկական Ցեղասպանութեան Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբը եւ ի մասնաւորի՝ Պրն. Վարդգէս Մահտեսեանը երեկոյի նախաձեռնութեան եւ կազմակերպումին համար: Ան եզրափակեց իր խօսքը ըսելով, որ միասնաբար պիտի քալենք դէպի արդար հատուցում, ոչ միայն ազատ հայրենիքի մը համար, այլ նաեւ իսկապէս քաղաքակրթուած մարդկային հասարակութեան կազմաւորման համար, առանց կաշկանդումներու եւ գրաւեալ հողատարածքի բռնութիւններու: Պիտի յաջողինք, որովհետեւ կը սիրենք մարդը, մարդկային արժանապատւութիւնը եւ արդարութիւնը: Չենք ընդունիր ազատութենէ զատ որեւէ լուծում:

Հսկումի վերջաւորութեան ելոյթ ունեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ երգչախումբը, որմէ տեք տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղում՝ կուսակցապետերու, երեսփոխաններու, դեսպաններու եւ այլ բարձրաստիճան պաշտօնակատարներու կողմէ:

Երեքշաբթի, 24 Ապրիլ 2012-ին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ եւ Հոգեհանգիստ 1.5 միլիոն նահատակներու անմար յիշատակին:



Հինգշաբթի, 26 Ապրիլին, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը ելոյթ ունեցաւ Կիպրոսի Խորհրդարանէն ներս, ներկայութեամբ Խորհրդարանի բոլոր անդամներուն:

### Մակարավանք ուխտագնացութիւն



Կազմակերպութեամբ Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի եւ գործակցութեամբ Ազգային Առաջնորդարանի, հինգերորդ անգամ ըլլալով, Կիրակի, 13 Մայիս 2012-ին, մեծ յաջողութեամբ իրականացաւ ուխտագնացութիւն դէպի Սուրբ Մակարայ Վանք, մասնակցութեամբ շուրջ 200 Կիպրահայերու եւ դուրսէն ժամանած հայրենակիցներու:

Այս ուխտագնացութիւնը կը վայելէր Կիպրոսի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (UNFICYP) հսկողութիւնը:

Ս. Մակարայ Վանքի քարուքանդ ու անմխիթար խորանին դիմաց տեղի ունեցաւ պատշաճ եկեղեցական արարողութիւն, Տ. Վարուժան Արքեպիսկոպոսի եւ Տէր Սոմիկ Քահանայի մասնակցութեամբ, որու ընթացքին ուխտագնացները նորոգեցին իրենց ուխտը եւ հաստատակամութիւնը՝ կառչած մնալու հայապատկան մեր վանքին:

Վերադարձին, կանգ առնելով Վիքթորիա փողոցին վրայ, ուխտագնացները այցելեցին նաեւ վերջերս վերանորոգւած Ս. Աստուածածին եկեղեցին ու յարակից կառոյցները: Մասնակիցներէն շատերը յուզմունքով վերյիշեցին իրենց մանկութիւնն ու անցեալը, որ անցուցած էին այդ թաղամասերուն մէջ:

Յոգեպէս գոհացած, անոնք իրենց խորին շնորհակալութիւնը յայտնեցին Պետական Ներկայացուցիչին, բժախընդորոէն կազմակերպած ըլլալուն համար այս ուխտագնացութիւնը:

Նոյն օրը երեկոյեան, Երեսփոխանական Գրասենեակին կողմէ մամլոյ հաղորդագրութիւն մը յղուեցաւ բոլոր տեղական թերթերուն եւ հեռատեսիլի կայաններուն:

### **Հայկական Մանկամտուր**

Արդէն իսկ տեղեակ էք, թէ շրջանցելով Կիպրոսի տնտեսական կացութեան ստեղծած անսպասելի դժուարութիւնները, Շաբաթ, 19 Մայիս 2012-ին Հայկական Մանկամտուրի





ծրագիրը իր առաջին գործնական փուլը թեւակոխեց եւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի կառոյցէն ներս, գործը ստանձնող ընկերութեան կողմէ սկիզբ առին Մանկամտուրի շինարարական աշխատանքները:

Երկար տարիներէ ի վեր սպասուած այս անհրաժեշտ հաստատութեան ստեղծումը, վերջապէս իրականութիւն կը դառնայ Կիպրահայ գաղութի կեանքէն ներս: Դրութիւն մը, որ ձեռնտու է թէ՛ ծնողներուն եւ թէ՛ փոքրիկներուն, որ անկասկած պիտի նպաստէ նաեւ մեր գաղութի հայապահպանման նպատակին:

### **ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Հիւպատոսի այց**

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի իրաւերով, Հայաստանի Հանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանութեան նորանշանակ Հիւպատոս Պրն. Մարատ Մելիքեան Կիպրոս այցելեց Ուրբաթ, 18 Մայիս եւ Շաբաթ, 19 Մայիս 2012-ին:

Նախապէս ապահովուած ժամադրութիւններով, երկու օրուայ ընթացքին, մօտ 40 հայրենակիցներ ներկայացան Ե-



րեսպիտիանական Գրասենեակ, որ իր բոլոր կարելիություններով Պրն. Հիւպատոսին տրամադրութեան տակ դրուած էր: Պրն. Հիւպատոսը ընդունեց նաեւ երկքաղաքացիութեան դիմումներ, որոնք ամբողջական էին:

Երկօրեայ այցելութիւնը աւարտեցաւ յաջողութեամբ, գոհացում տալով մեր հայրենակիցներու պահանջներուն:

Շաբաթ, 19 Մայիսին, Պրն. Հիւպատոսը, ընկերակցութեամբ Պրն. Մահտեսեանի, ներկայ գտնուեցաւ նաեւ Նարեկ Հայկական Վարժարանէն ներս Հայկական Մանկամտօրի շինարարական սկզբնական աշխատանքներուն:

Նոյն օրը երեկոյեան ան Յունաստան վերադարձաւ, լաւագոյն տպաւորութիւններով: Շնորհակալութիւն կը յայտնենք Պրն. Սելիքեանին, որ ընդառաջեց մեր հրաւերին, մաղթելով անոր նորանոր յաջողութիւններ իր առաքելութեան մէջ:

### **Նարեկ Հայկական Վարժարաններու կեանքէն**

Երկուշաբթի, 7 Մայիս 2012-ին, Կիպրոսի Եւրոպական Միութեան Նախագահութեան ստանձնումին առիթով կազմակերպուող ձեռնարկներու ծիրէն ներս, Տէր եւ Տիկին

Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Ստրովոլուսի Այիոս Տիմիթրիոս եւ Նարեկ Հայկական Վարժարանի միացեալ ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Այիոս Տիմիթրիոս Վարժարանի սրահին մէջ, «Միասնաբար կը սորվինք եւրոպայի մասին» նիւթով: Ձեռնարկին իր պատգամը փոխանցեց Կըրթութեան եւ Մշակոյթի Նախարար Պրն. Եորղոս Տիմոսթեանու:

Չորեքշաբթի, 23 Մայիս 2012-ին, տեղի ունեցաւ Նարեկ վարժարաններու տարեկան մարզահանդէսը, հովանաւորութեամբ Պետական Ներկայացուցիչին: Ձեռնարկի աւարտին, Պրն. Մահտեսեան կատարեց մետալներու յանձնում առաջնակարգ դիրքերը գրաւող բոլոր աշակերտներուն:



Ուրբաթ, 1 Յունիս 2012-ին, Պետական Ներկայացուցիչին նախաձեռնութեամբ, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահէն ներս տեղի ունեցաւ հասութաբեր պագար մը, որու ընթացքին ծախու դրուեցան UNICEF-ի զանազան արտադրութիւններ:



Երեքշաբթի, 5 Յունիս 2012-ին, Պրն. Մահտեսեանի յատուկ կարգադրութեամբ, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի վերջին երեք դասարաններու եւ միջնակարգի աշակերտները, ընկերակցութեամբ Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահնազեանի եւ իրենց դաստիարակներուն, այցելեցին Խորհրդարան: Անոնք, դիմաւորուեցան Խորհրդարանի Կրթական Յանձնախումբի անդամներուն եւ Նախագահ Պրն. Նիկոս Թորնարի-



տիսի կողմէ, որուն յանձնեցին յուշանուէր մը, ծանօթացան խորհրդարանի կառոյցին եւ վերջաւորութեան այցելեցին խորհրդարանի Նախագահ Եաննակիս Օմիրուին, որուն նոյնպէս նուիրեցին խորհրդանշական նուէր մը:



Չորեքշաբթի, 20 Յունիս 2012-ին, տեղի ունեցաւ Նարեկ Վարժարաններու Նախակրթարանի եւ Միջնակարգի Ամավերջի հանդէսը, նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչին: Հանդէսի վերջաւորութեան, Վարուժան Արքեպիսկոպոս Հերկելեան եւ Պրն. Մահտեսեան կատարեցին վկայականներու բաշխում, իսկ Պրն. Մահտեսեան շրջանաւարտներուն եւ ընկերակցող ուսուցիչներուն յանձնեց ականդութիւն դարձած իր նուէրը՝ Հայաստան շրջապտոյտի պահարանները:

Յաջորդ օրը, Հինգշաբթի, 21 Յունիս 2012-ին, ըստ աւանդութեան, Նարեկի շրջանաւարտները, տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ կղզիի բոլոր հայ շրջանաւարտները, ներկայութեամբ Վարուժան Արքեպիսկոպոսին եւ Քահանայ հայրերուն, հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանը:



### Կիպրահայ գաղութի կեանքն

Շաբաթ, 7 Ապրիլ 2012-ին, Լիբանանի Հայկազեան Համալսարանի մարզական խումբն պատուիրակությունը մը, որ Կիպրոս կը գտնուէր ՀԵՄ-ՀՄԸՄ-ի հրաւերով, մասնակցելու տեղական համալսարաններու հետ նախատեսուած խաղերուն, ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Պետական Ներկայացուցիչին հետ:

Կիրակի, 8 Ապրիլ 2012-ին, Տէր եւ Տիկին Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Լառնաքայի Հայ Ակումբին կազմակերպած կեսօրուայ Ջատկուայ ճաշին:

Ուրբաթ, 4 Մայիս 2012-ին, Տէր եւ Տիկին Մահտեսեաններ ներկայ գտնուեցան, Ազգային Առաջնորդարանի կազմակերպութեամբ, «Վ. Իւթիճեան» սրահին մէջ տեղի ունեցած «Տարագրութիւն, Որբեր, Մելգոնեան Հաստատութիւն» գիրքի զինեձօնին, որու ընթացքին Տիկին Սօսի Թորոսեան պարզեւատրուեցաւ «Ս. Մետրոպ Մաշտոց» շքանշանով:

Շաբաթ, 5 Մայիս 2012-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Համազգայինի Օշական Մասնաճիւղի «Սիփան» Պարախումբի տարեկան ելոյթին, որ տեղի ունեցաւ Ստրովոլուսի Քաղաքապետարանի սրա-

հին մէջ: Այս ձեռնարկը կը վայելէր Կիպրոսի Կրթութեան ու Մշակոյթի Նախարարին եւ Պրն. Մահտեսեանին հովանաւորութիւնը:

Շաբաթ, 12 Մայիս 2012-ին, Տէր եւ Տիկին Մահտեսեաններ, յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցան Մարի Ռոզ Աբուսէֆեանի «Տիգրան Մեծ» ասմունքի երեկոյին, կազմակերպութեամբ Համազգայինի Օշական մասնաճիւղին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Փասիտի» սրահին մէջ:

Շաբաթ, 19 Մայիս 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ պաշտամունքին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Յոյն Աւետարանական Եկեղեցւոյ մէջ: Օրուան պատգամը փոխանցեց Վերապատուելի Վարդգէս Քասունի:

Երեքշաբթի, 22 Մայիս 2012-ին, Պրն. Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Դոկտ. Արտա Ճեպէճեանի՝ Արեւելեան Միջերկրականի Վտանգուած Լեզուներու Միջազգային Խորհրդաժողովի ծիրէն ներս տուած դասախօսութեան, որ տեղի ունեցաւ Կիպրոսի Պետական Համալսարանի սրահէն ներս, կազմակերպութեամբ Բիւզանդական եւ Արդի Յունական հետազօտութիւններու բաժանմունքին կողմէ: Այս եռօրեայ խորհրդաժողովին կը մասնակցէին նաեւ զանազան երկիրներէ եկած հայազգի այլ դասախօսներ:

Չորեքշաբթի, 23 Մայիս 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Ակրոպոլիս Փարքին մէջ տեղի ունեցած «Խաղաղ Գոյակցութիւն» խորագիրով մշակութային միջոցառումին, նախաձեռնութեամբ ՄԱԿ-ի անդամ կազմակերպութիւններու, որու ընթացքին իր մասնակցութիւնը բերաւ Համազգայինի «Սիփան» Պարախումբը:

Շաբաթ, 2 Յունիս 2012-ին, յատկապէս հրաւիրուելով, Պետական Ներկայացուցիչը, իր տիկնոջ հետ, ներկայ գրտնուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 94-ամեակի հանդիսութեան, որ տեղի ունեցաւ «Փասիտի» հանդիսասրահին մէջ, կազմակերպութեամբ Հայ Յեղափո-

խական Դաշնակցութեան եւ յարակից միութիւններուն: Օր-  
լան բանախօսն էր Սուրիահայ հասարակական գործիչ Պրն.  
Գրիգոր Տունկեան:

Կիրակի, 3 Յունիս 2012-ին, Պետական Ներկայացուցիչը  
եւ տիկինը ներկայ գտնուեցան Լիմասոլի եկեղեցւոյ կից  
գտնուող սրահին մէջ տեղի ունեցած դասախօսութեան,  
«Նիկոլ Աղբալեանի կեանքն ու գործունէութիւնը» թեմայով,  
որ դարձեալ փոխանցեց Պրն. Գրիգոր Տունկեանը:

Ուրբաթ, 22 Յունիս 2012-ին, Տէր եւ Տիկին Մահտեսեան-  
ներ ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ Երգ-  
չախումբի Վարչութեան կազմակերպած Մանկապատանե-  
կան Համերգին, մասնակցութեամբ եկեղեցւոյ երգչախումբի  
կրտսերներու խումբին, որ տեղի ունեցաւ Ազգային Առաջ-  
նորդարանի «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ:

### **Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ**

Երկուշաբթի, 2 Ապրիլ 2012-ին, Պրն. Վարդգէս Մահտես-  
եան աշխատանքային հանդիպում մը ունեցաւ Եւրոպական  
Հարցերու Նախագահի փոխ-նախարար Պրն. Անտրէաս  
Մարոտեաննիսի հետ, քննելու Կիպրահայ Համայնքի մաս-  
նակցութեան կարելիութիւնները Եւրոմիութեան Կիպրոսի  
Նախագահութեան ստանձնումին առիթով:

Հինգշաբթի, 5 Ապրիլ 2012-ին, Պետական Ներկայացու-  
ցիչը ներկայ գտնուեցաւ Յունաստանի Վարչապետին ի պա-  
տիւ սարքուած ճաշին, որ տեղի ունեցաւ Նախագահական  
Պալատին մէջ:

Երեքշաբթի, 10 Ապրիլ 2012-ին, Պետական Ներկայացու-  
ցիչը հանդիպեցաւ Արտաքին Գործոց Նախարար Տիկին  
Էրատօ Կոզաքու-Մարքուլիսին հետ՝ վերջինիս փափաքով,  
որ զեկուցեց Հայաստան կատարած իր այցելութեան եւ  
բարձր տպաւորութիւններուն մասին եւ ապա՝ Արտաքին  
Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն Պրն. Պետ-



րոս Էֆթիխիուլին հետ, գաղութա յուզող հարցերու կապակցութեամբ:



Շաբաթ, 5 Մայիս 2012-ին, Պրն. Մահտեսեան յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ ԷՏԷՔ կուսակցութեան 12-րդ խորհրդաժողովին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ State Fair-ի սրահին մէջ:

Կիրակի, 27 Մայիս 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Կիպրոսի քաղաքական կուսակցութիւններու եւ Կիպրոսի մէջ Ալովաքիոյ Դեսպանատան կազմակերպած միացեալ բազմամշակութային ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Կիպրոսի գրաւեալ շրջանի Մարոնիթներու Քորմաքիտիս գիւղին մէջ: Այս միջոցառումին, Կիպրահայ գաղութի կողմէ իր մասնակցութիւնը բերաւ Յամազգայինի «Սիփան» պարախումբը:

Երեքշաբթի, 5 Յունիս 2012-ին, Պրն. Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Ոստիկանական Ակադեմիայի 2011-2012 տարեշրջանի ամավերջի միջոցառումին:

Երկուշաբթի, 18 Յունիս 2012-ին, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Արտաքին Գործոց Նախարարութեան Դեսպան եւ Հիւպատոսական առաքելու-

թեանց Տնօրէն Պրն. Բանտիաս Տ. Իլիատիսին հետ, մօտէն ծանօթանալու համար Կիպրոսի հիւպատոսական առաքելութիւններու գործելաձեւին:

Յինգզաբթի, 21 Յունիս 2012-ին, Պրն. Մահտեսեան հանդիպեցաւ Պաշտպանութեան Նախարար Պրն. Տիմիթրիս Իլիատիսին հետ, զինուորական ծառայութեան հետ առնչութիւն ունեցող հարցերով:



Երեքշաբթի, 26 Յունիս 2012-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Թեմական ժողովի ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանի եւ Վարչական ժողովի ատենապետ Պրն. Շոն Կելիերեանի, տեսակցութիւն մը ունեցաւ Սիացեալ Ազգերու Կազմակերպութեան Ընդհանուր Քարտուղարի Կիպրոսի հարցերով յատուկ ներկայացուցիչ Տիկին Լիզա Պաթընհայմի եւ Աւագ խորհրդական Պրն. Վլտ-զայմըյր Սիպորի հետ, քննարկելու գրաւեալ շրջանին մէջ գտնուող Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հարցը:

Նոյն օրը կէսօրին, Պրն. Մահտեսեան ներկայ գտնուեցաւ հրաժեշտի ճաշի մը, ի պատիւ Նուրբիոյ Առաքելական Եկեղեցւոյ Արքեպիսկոպոս Անթոնիօ Ֆրանքոյի, կազմակերպու-

թեամբ Մարոնիթներուն Արքեպիսկոպոս Եուսէֆ Սուէյֆի, Լատիններու Առաջնորդական փոխանորդ Էվէնտզիօ Չերե-րայի եւ Համայն Կիպրոսի Քլիրոս Կաթողիկոսի, որ տեղի ու-նեցաւ «Չիլթըն» պանդոկին մէջ:

Իսկ երեկոյեան, ՏԵՐ եւ Տիկին Մահտեսեաններու բնակա-րանը հիւրասիրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան Նախարարութենէն եւ Կիպրոսի Կրթական ու Մշակոյթի Նախարարութենէն պատուիրակութիւն մը:

### Ջօրակոչիկներու հանդիպում

Երկուշաբթի, 25 Յունիս 2012-ին, Պետական Ներկայա-ցուցիչի Գրասենեակ ներկայացան 2011-2012-ի բանակի ծառայութեան թեկնածուները, ընկերակցութեամբ իրենց ծնողներուն: Պրն. Մահտեսեան խօսք ամենլով, լայն կէտե-րու մէջ փոխանցեց բանակի ծառայութեան դրական կողմե-րը եւ յորդորեց անոնց համակերպիլ աւագ զինուորական պատասխանատուներու ցուցմունքներուն: Ան նաեւ հաս-տատեց իր պատրաստակամութիւնը անոնց կողքին կանգ-նելու՝ տրամաբանական դժուարութիւններու պարագային:

### Ցաւակցագիր

Երկուշաբթի, 21 Մայիս 2012-ին, Պրն. Մահտեսեան իր ու Կիպրահայ համայնքի անունով, ցաւակցագիր մը յղեց «Սի-փան» եւ «Նանոր» Պարախումբերու պարուսոյց Պրն. Ֆե-լիքս Յարութիւնեանի այրիին ու դստեր, ընդգծելով, թէ ան իր խիստ ու միեւնոյն ժամանակ արհեստավարժի մօտեցու-մով, կարողացաւ սիրաշահիլ Կիպրոսի փոքրիկներուն ու չափահասներուն սիրտն ու հոգին եւ յաւերժ պիտի ապրի մեր յիշողութեան մէջ:

«Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան Օրէնքներուն» բաժինը լոյս պիտի տեսնէ «Լրատու»-ի յաջորդ թիւով, չժանրաբեռնելու համար մեր ընթերցողները:

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամառուայ արձակուրդի շրջանին,  
 Երեսփոխանական Գրասենեակը  
 փակ պիտի մնայ  
 Երկուշաբթի, 6 Օգոստոսին  
 մինչեւ  
 Կիրակի, 26 Օգոստոս 2012-ը:

### **ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

#### **Քաղաքական Գրասենեակ**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
 Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42  
 Ել. Հասցե office@armenianmp.com  
 Ուտայնէջ՝ <http://www.armenianmp.com>

#### **Խորհրդարանական Գրասենեակ**

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
 Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42  
 Ել. Հասցե vmahdessian@parliament.cy